ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

17 հունիսի 2019 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներից 5-ը:

Բացակա էին ավագանու անդամներ, Վալերիկ Հովհաննիսյանը, Արամայիս Գալստյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորիկ Մարտիրոսյանը

Նիստը արձանագրում էր Աննա Մովսիսյանը:

Նիստին ներկա էին ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակիցներ՝ Հասմիկ Դանիելյանը, Ոսկան Միսակյանը, Վահե Բաղդասարյանը, ակտիվիստ Ալինա Մախսուդյանը և <<Իրավունքի և արժեքների գերակայություն >> ՀԿ փոխնախագահ Սոնա Աղեկյանը:

ԼՍԵՑԻՆ-Համայնքի ղեկավարը նշեց, որ ս/թ հունիսի 14-ին ավագանու անդամները դիմում են ներկայացրել համայնքի ղեկավարին՝ հրավիրելու արտահերթ նիստ՝ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ:

Համայնքի ղեկավարն առաջարկեց հաստատել օրակարգը՝

ՈՐՈՇԵՑԻՆ- Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Հաստատել Փոքր Վեդի համայնքի ավագանու 17.06.2019թ. թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը

1.Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

Մինչ օրակարգային հարցին անդրադառնալը համայնքի ղեկավարն ավագանու անդամներին ասաց, որպեսզի բացատրեն անվստահություն հայտնելու պատճառները:

Սևակ Մանուկյանը նշեց, որ

1.Պարբերաբար ոտնահարվում է ավագանու իրավունքները

2.Համայնքի ղեկավարը չի պաշտպանում համայնքի շահերը

3.Համայնքի ղեկավարը համայնքում ոչ մի աշխատանք չի կատարել

4.Ավագանու կայացրած որոշումները չեն կատարվում:

Գալուստ Մանուկյանը նշեց, որ 2018թ. առանց ավագանու որոշման, պայմանագիր է կնքել շինարարական կազմակերպության հետ ասֆալտապատման աշխատանքների կատարման համար: Համայնքի ղեկավարը ասֆալտապատման աշխատանքների համար ավագանուն չի տեղեկացրել և որոշումը միանձնյա է ընդունել: Աշխատանքը նորմալ չի կատարվել, որի հետևանքով համայնքին պատճառվել է 6735000 հազար, իսկ պետությանը՝ 4,200.000 դրամի վնաս: Ավագանին որոշում է կայացրել մանկապարտեզ հաճախող 1 երեխայի համար սննդի գումար օրական սահմանել 300 /ներառյալ ԱԱՀ/ դրամ, համայնքի ղեկավարը հսկողություն չի սահմանել որոշման կատարմանը, որի հետևանքով սննդի գումարը հասնում է 380 դրամ:

Մարտ ամսին մեկ երեխայի համար ծախսվել է 50.000 դրամ, որն անթույլատրելի է, նշանակում է, որ համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նկատմամբ անփույթ է վարվում:

Տիգրան Ստեփանյանը համայնքի ղեկավարին ասաց, որ բացատրի, թե ինչու աշխատողը ժամանակին չի ներկայացրել «Խոր Վիրապ»Գյուղատնտեսական ասոցիացիայի կողմից ներկայացվող Ջի նիշյան Հիշատակի Հիմնադրամի և «ՔԱՐԴ Ագրո Կրեդիտ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Փակ Բաժնետիրական ընկերությանհետ համատեղ «Սոցիալական Պատասխանատվության Դրամաշնորհային

Ծրագիր 2019»-ը ծրագիրը, որի համար պատասխանատվության չի ենթարկվել և նշված ժամանակահատվածում ստացել է լրավճար:

Համայնքի ղեկավարը նշեց, որ լրավճար տրամադրվել է 2018թ. 4 սուբվենցիոն ծրագրերը կյանքի կոչելու համար, իսկ ինչ վերաբերվում է ծրագիրը չուղարկելուն, նա նշեց, որ հեռախոսազրույց է ունեցել ծրագրի կոորդինատորի հետ, այն դիտարկվել է որպես թույլ ծրագրային առաջարկ, այդ իսկ պատճառով ընթացք չի տրվել:

Գալուստ Մանուկյանը նշեց, որ ավագանին համայնքի ղեկավարին թույլատրել է մասնակցելու <<ոռոգման ցանցի բարելավում>> սուբվենցիոն ծրագրին, իսկ համայնքի ղեկավարը ներկայացրել է 6 սուբվենցիոն ծրագրային հայտեր:

Կառավարության կողմից նախնական հավանության է արժանացել <<Ոռոգման ցանցի բարելավում>> ծրագիրը, <<Մովսես Խորենացի փողոցի գազաֆիկացում>> ծրագիրը, համայնքի ղեկավարը այդ մասին ռտեեկացել է մայիսի 16-ին, իսկ ծրագրի վերջնաժամկետը մայիսի 15-ն է եղել: Ավագանիները խնդրանքով դիմել են Աժ պատգամավորներ՝ Սոս Ավետիսյանին և Ռուստամ Բաքոյանին, որ ծրագիրը կյանքի կոչեն: Պատգամավորները խոստացան հարցին ընթացք տալ:

Այդ ծրարգերի շուրջ համայնքի ղեկավարը քննարկում է ունեցել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակից Նարինե Ավետյանի հետ, սակայն ծրարգերը կյանքի կոչելու համար բացակայում է ավագանու թույլտվությունը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ 2018թ. հուլիսի 17-ի ավագանու նիստում ավագանուն տեղեկացրել է որ հավանության է արժանացել <<Վ. Սարգսյան փողոցի ասֆալտապատում>> ծրագիրը: Սեպտեմբերի 14-ին կայացել է մրցույթ, մասնակցել են 9 կազմակերպություններ, հաղթել է <<Տեր-Հայրապետյան-Շին>> ՍՊԸ-ն:

Ավագանին ասաց, որ տեղյակ չի եղել վերը նշված ծրագրից:

Ասֆալտապատման աշխատանքները ավարտելուց հետո ստորագրել է ավարտական ակտը, որից 2 օր անց ի հայտ են եկել թաքնված թերությունները:

Պայմանագրի մեջ նշված է 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ի հայտ են եկել թաքնված թերություններ, ապա անհրաժեշտ է տեղեկացնել շինարարին:

2018թ. դեկտեմբերի 27-ին տեղեկացրել է և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը, Արարատի մարզպետարանին և շինարարին:

Հունվարի 11-ին ավագանու անդամներին հրավիրել է համայնքապետարան՝ թաքնված թերությունների ակտ կազմելու համար, սակայն վերջիններս չեն եկել :

Թաքնված թերությունները վերացվել են նշված կազմակերպության կողմից, որից հետո գրություն են ուղարկել՝ 10 օրվա ընթացքում գումարը փոխանցելու համար:
Սևակ Մանուկյանն ասաց, որ ավագանին տեղյակ չի եղել ասֆալտապատման աշխատանքներից, համայնքի ղեկավարը կատարել է աշխատանքը միայնակ, այդ իսկ պատճառով ավագանին կտրականապես մերժում է գումար տրամադրել նշված աշխատանքի համար:
Մանկապարտեզի սննդի գումարի վերաբերյալ համայնքապետարանի հաշվապահ Արամ Խաչատրյանը պատասխանեց, որ մանկապարտեզի աշխատանքը առաջնորդվում է <<Նախադպրոցական կրթության մասին>> << օրենքով մանկապարտեզի կանոնադրության հիման վրա, ուսումնասիրություն է կատարվել մի քանի մանկապարտեզներում, որտեղ սննդի գումար տատանվում է մինչև 300-480 դրամ, առաջնորդվում են նորմատիվներով , որտեղ հստակ նշված է, որ մեկ երեխային պետք է ապահովվի 1300-1400 կիլոկալորիա սնունդ, ունեն գնումների պլան, որի հիման վրա անցկացրել են մրցույթ, մրցույթի մասնակից մատակարարը մատակարարում է ապրանքը այնպիսի գներով, որի արդյունքում ձևավորվել է գին, որը հասնում է 380 դրամ:
Ինչ վերաբերվում է, մարտ ամսին մեկ երեխայի համար ծախսված 50.000 դրամին, նշվեց, որ երեխաների տարիքային առանձնահատկությունից ելնելով մանկապարտեզում գործող չորս խմբերն էլ մարտ ամսին աշխատել են, երեխաների թիվը նշված ամսում եղել է քիչ, այդ իսկ պատճառով մեկ երեխայի ծախսը գերազանցել է պայմանագրով նախատեսված գումարի չափը:
Սկսած հունիս ամսից՝ մեկ երեխայի ծախսը կազմում է 20.000 << դրամ՝ 4000 << դրամով պակաս պայմանագրով սահմանված գումարի չափից:
Սևակ Մանուկյանը նշեց, որ որոշումը կայացվել է 2018թ. հուլիսի 17-ին և մինչ այժմ ոչ մի անգամ չի բարձրաձայնվել,որ կայացրել են օրենքին հակասող որոշում:
Պարգև Մանուկյանը համայնքի ղեկավարին հարցրեց, թե ինչու մինչ այժմ հողամասերի վարձակալության մրցույթ չի անցկացվել:
Համայնքի ղեկավարը նշեց, որ կկազմվի մրցութային հանձնաժողով և հարցին արագ կերպով լուծում կտրվի:
Ավագանու անդամ Տիգրան Ստեփանյանը, համայնքի ղեկավարին, ասաց. որպեսզի բացատրի, թե ինչ հիմքով է համայնքի հաշվեկշռում գրանցված յոթ ավտոտնակները սեփականաշնորհվել քաղաքացիների կողմից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ սեփականաշնորհումները կատարվել են 1993թ. գյուղ. խորհրդի նիստերի արձանագրությունների քաղվածքների հիման վրա:

Տիգրան Ստեփանյանը նշեց, որ քաղվածքների բովանդակությունը չի համատասխանում արխիվում գտնվող արձանագրությունների բովանդակությանը:

Սևակ Մանուկյանը համայնքի ղեկավարին ասաց, որպեսզի բացատրի, թե ինչպես է համայնքում գտնվող ֆուտբոլի դաշտից առանձնացվել հողակտոր, եթե նշված դաշտը ընդգրկված է եղել ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60 հոդվածով սահմանված հողերի ցանկում նախորդ նիստում հանձնարարվել է 10 օրյա ժամկետում 0005-0044 ծածկագիրը կրող հողամասը և 0005-0001 ծածկագիրը կրող հողամասը դարձնել մեկ գույքային միավոր:

Համայնքի ղեկավարը նշեց, որ տարածքն առանձնացվել է քանի, որ 2018թ. հուլիսի 13-ին փոխվարչապետ Արարատ Միրզոյանի մոտ կայացած սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի նիստի ընթացքում հավանության է արժանացել <<Տուրիզմի զարգացմանն ուղղված գյուղատնտեսական շուկայի, տեղեկատվական կենտրոնի և արագ սննդի սպասարկման կետի հիմնում>> ծրագիրը:

Սևակ Մանուկյանը համայնքի ղեկավարին ասաց, նաև, որ բացատրի, թե ինչու մինև այժմ ՄարգարՀովհաննիսյան 24/1 հասցեում գտնվող տարածքը չի բաժանել չորս գույքային միավորի:

Համայնքի ղեկավարը նշեց, որ հարցին կանդրադառնա համայնքի գլխավոր հատակագիծ ունենալուց հետո:

Համայնքի ղեկավարն առաջարկեց անցնել օրակարգային հարցին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայտնել անվստահություն համայնքի ղեկավարին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Փոքր Վեդի, 098-98-68-64, , poqrvedi.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 21

17.06.2019թ. ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Հաստատել Փոքր Վեդի համայնքի ավագանու 17.06.2019թ. թիվ 7 արտահերթ նիստի օրակարգը

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՓՈՔՐ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Փոքր Վեդի, 098-98-68-64, , poqrvedi.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 22

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ավագանու 14.06.2019թ. դիմումը

Անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳԱԼՈՒՍՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՎԱԿ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ